

ՇՈՒՄԵՐԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կոմտենսիվ (բովանդակային) տիպաբանության (տե՛ս [Климов 1983]) հիմքում ընկած լեզվական տիպ հասկացությունը ոչ թե առանձին, կամայական կերպով ընտրված կառուցվածքային հատկանիշների պարզ միասնություն է, այլ միմյանց հետ փոխկապակցված, փոխապայմանավորված իմաստաբանական-քերականական հատկանիշների հիերարքիկ մի ամբողջություն: Կոմտենսիվ տիպաբանական դասակարգման չափանիշը իրականության սուբյեկտա-օբյեկտային հարաբերությունների արտացոլման եղանակներն են: Այդ եղանակները, որ պայմանավորում են լեզվի ամբողջ համակարգը բոլոր մակարդակներում (բառային, շարահյուսական, ձևաբանական, որոշ լեզուներում նաև հնչյունաձևաբանական), իրենց հերթին պայմանավորված են տվյալ լեզվական տիպին հատուկ ներքին իմաստաբանական մի ստիմուլով՝ այսպես կոչված սեմանտիկ դետերմինանտով:

Բնական լեզուներում երևան են գալիս հետևյալ բովանդակային տիպերը. դասային, ակտիվ, էրգատիվ, նոմինատիվ:

Դասային տիպի սեմանտիկ դետերմինանտը մի շարք դասային դերերի հակադրությունն է: Այս տիպը բնութագրվում է գոյականների բաժանումով մի շարք բովանդակային դասերի, որոնք բայական համակարգում արտացոլվում են համապատասխան դիմա-դասային ցուցիչների տեսքով:

Ակտիվ տիպի համար, որի սեմանտիկ դետերմինանտը ակտիվ և ոչ-ակտիվ դերերի հակադրությունն է, հատկանշական է գոյականների բաժանումը երկու իմաստային խմբի/դասի՝ ակտիվ (շնչավոր) և ոչ-ակտիվ (անշունչ), բայական պառապաշարի տրոհումը գործողության և վիճակի բայերի, ակտիվ/ոչ-ակտիվ հոլովների և բայական համակարգում ակաիվ/ոչ-ակտիվ դիմային ցուցիչների գոյությունը, կերպի (aspect)՝ ժամանակի քերականական կարգերի բացակայությունը, փոխարենը՝ գործողության կերպի (Aktionsart) արտահայտումը բառակազմական կամ տարարմատ հիմքերի միջոցներով և այլն:

Էրգատիվ տիպին, որի սեմանտիկ դետերմինանտը գործողության կատարողի (ազենտիվ) և գործողության կրողի (ֆակտիտիվ) դերերի հակադրությունն է, բնորոշ գծերից են. բայերի բաժանումը երկու խմբերի՝ ազենտիվ (անցողական) և ֆակտիտիվ (ամանցողական)՝, էրգատիվ (ազենտիվ բայով կազմված) և արքոյուտիվ (ֆակտիտիվ բայով կամ անվանական ստորոգյալով կազմված) կառուցվածքի նախադասությունների հակադրությունը, հոլովական համակարգում էրգատիվ (ազենտիվ բայի սուբյեկտի)՝ և արքոյուտիվ (ազենտիվ բայի օբյեկտի և ֆակտիտիվ բայի սուբյեկտի) հոլովների, իսկ բայական համակարգում էրգատիվ և արքոյուտիվ սուբյեկտա-օբյեկտային ցուցիչների գոյությունը:

Նոմինատիվ տիպի սեմանտիկ դետերմինանտը ատրյեկտի և օբյեկտի հակադրությունն է: Այս տիպի լեզուներում բայերը բաժանված են ըստ անցողականության և անանցողականության հատկանիշի, մախադատության կառուցվածքը անկախ բայի բնույթից մեկն է՝ նոմինատիվը (երկու հնարավոր տարբերակներով՝ ներգործական և կրավորական), հիմնական հոլովներն են ուղղականը (նոմինատիվ) և հայցականը:

Սեմանտիկ դետերմինանտի վաիժխությունը լեզվի զարգացման ընթացքում առաջ է բերում համապատասխան կառուցվածքային փոփոխություններ: Իսկ քանի որ լեզվի տարբեր մակարդակներում այդ փոփոխությունների ընթացքը տարբեր է, մասնավորապես, ձևաբանական մակարդակում նրանք ավելի դանդաղ են ընթանում, քան շարահյուսականում, քիչ չեն լեզուները, որոնցում համատեղվում են տարբեր լեզվական տիպերին բնորոշ հատկանիշները:

Այդպիսի լեզուների թվին է պատկանում և շումերերենը: Ստորև կներկայացնենք շումերերենին բնորոշ կառուցվածքային այն առանձնահատկությունները, որոնք կարևոր են լեզվի կոմտենսիվ տիպը որոշելու համար:

Բառապաշար

Անվանական բառապաշարի համար բնորոշ է բաժանումը երկու հակադիր իմաստային խմբերի՝ ակտիվ : ոչ-ակտիվ (շնչավոր : անշունչ): Այս թաքնված (լատենտ) հակադրությունը, որ բնորոշ է ակտիվ տիպաբանության լեզուներին, իր արտացոլումն է գտել լեզվի ձևաբանական մակարդակում (տե՛ս ստորև):

Բայարմատը իմաստային առումով ըստ էության չեզոք է: Նրա բնույթը (անցողական, անանցողական, գործողության, վիճակի) բացահայտվում է շարահյուսական և ձևաբանական մտկարդակներում:

Բայական բառապաշարի համար հատկանշական է տարարմատ (սուպլետիվ) հիմքերի առկայությունը, որոնց միջոցով արտահայտվում են գործողության կերպային տարբերությունները. *duḡ₁ : e* «ասել, խոսել», *gen* : *du* «զնայ», *de₆* : *tum* «տանել, բերել»: Հայտնի են նաև սուբյեկտի կամ օբյեկտի թվով միմյանցից տարբերվող փոքրաթիվ տարարմատ բայեր. *tus* (եզ.) : *durum* (հոգն.) «բնակվել, բնակեցնել», *ti* (եզ.) : *sig₇* (հոգն.) «ապրել», *de₆* /*tum* (եզ.) : *lah₄* (հոգն.) «տանել, բերել»: Նման տարարմատությունը, ինչպես վերը նշվեց, հատկանշական է ակտիվ լեզուների համար [Климов 1977, 146]:

Շումերերենում բացակայում է ածական անվան դասը: Որոշչային իմաստով հանդես են գալիս վիճակ արտահայտող բայարմատները՝ երևույթ, որ ակտիվ տիպաբանության կարևոր առանձնահատկություններից է [Климов 1977, 106]. *gibil* «նոր (լինել), նորացնել», *gal* «մեծ (լինել), մեծանալ, մեծացնել»:

Շարահյուսություն

Շումերերեն մախադատությանը հատուկ է երկու կառուցվածք. էրգատիվ և արտյուտիվ:

Էրգատիվ կառուցվածքը բնորոշ է անցողական բայով, աբսոլյուտիվ կառուցվածքը՝ անանցողական բայով կամ անվանական ստորոգյալով նախադասությունների հասար:

Էրգատիվ կառուցվածքի նախադասության ենթական արտահայտվում է էրգատիվ հոլովով: Աբսոլյուտիվ կառուցվածքի ենթական, ինչպես և էրգատիվ կառուցվածքի ուղիղ խնդիրը, արտահայտվում է աբսոլյուտիվ հոլովով:

Էրգատիվ կառուցվածքի նախադասության համար հատկանշական է S-O-V (ենթակա-խնդիր-բայ) շարադասությունը, աբսոլյուտիվի համար՝ S-[O]-V (ենթակա- [անուղղակի խնդիր]-բայ):

Շարահյուսական մակարդակում արձանագրված բոլոր այս փաստերը բնութագրական են էրգատիվ կառուցվածքի լեզուների համար:

Ձևաբանություն

Գոյական անուն

Գոյական անվանը հատուկ են դասի (ակտիվ/շնչավորը: ոչ-ակտիվ/անշունչ), թվի (եզակի : հոգնակի) և հոլովի կարգերը:

Դասի քերականական կարգը ի հայտ է գալիս հոգնակի թվում: Շումերերենին հայտնի են հոգնակիակերտ -ene- և -hā ածանցները, որոնցից առաջինը գործածվում է միայն ակտիվ, իսկ երկրորդը ոչ-ակտիվ գոյականների հետ³:

Դասային տարբերությունները երևան են գալիս նաև հոլովական համակարգում. տրական հոլովը գործածվում է միայն ակտիվ, մինչդեռ բացառական հոլովը՝ միայն ոչ-ակտիվ գոյականների հետ:

Դասի քերականական կարգը արտացոլում է ակտիվ տիպաբանության ինմնական հակադրությունը (ակտիվ : ոչ-ակտիվ):

Հոլովական համակարգը ներկայացված է աբսոլյուտիվ, էրգատիվ-դիրեկտիվ, սեռական, տրական, համեմատական, համատեղական (կոմիտատիվ) և մի շարք տարածական հոլովներով:

Աբսոլյուտիվ հոլովով արտահայտվում է.

ա/ անանցողական բայի կամ անվանական ստորոգյալի ենթական, բ/ անցողական բայի ուղիղ խնդիրը:

Էրգատիվ-դիրեկտիվը արտահայտում է.

ա/ անցողական բայի ենթական և բ/ բայի գործողության ուղղությունը, ինչպես նաև մի շարք վերջինից ածանցյալ իմաստներ:

Էրգատիվ և աբսոլյուտիվ հոլովների հակադրությունը էրգատիվ տիպաբանության կարևորագույն ձևաբանական հատկանիշներից է, իսկ էրգատիվ հոլովի համատեղումը որևէ թեք հոլովի (տվյալ դեպքում՝ դիրեկտիվի) հետ բնորոշ է էրգատիվության վաղ փուլի լեզուներին [Куликов 1973, 113-114]:

Դերանուններ

Անձնական դերանունները (mā(-e) «ես», za(-e)/zē «դու», ene/ane «նա», me(n)de(n) «մենք», me(n)ze(n) «դուք», e/anene «մրանք»), ի տարբե-

րություն գոյականներից. չեն տարբերակում էրգատիվ և արսույնտիվ հոլովները: Այս փաստը, անշուշտ. հնարավոր չէ բացատրել էրգատիվ տիպաբանության տեսանկյունից. սակայն հեշտությամբ տեղավորվում է ակտիվ տիպաբանության շրջանակների մեջ. մենք գործ ունենք անձ արտահայտող, հետևաբար՝ ակտիվ դասի դերանունների հետ:

Հարցական դերանունների թվին են պատկանում *աճա «ով»* և *առա «ինչ»* դերանունները, որոնք համապատասխանաբար վերաբերում են ակտիվ և ինակտիվ դասի գոյականներին⁴:

Գոյականի դասը իր արտահայտությունն է գտնում նաև 3-րդ դ. ստացական դերանվանական ածանցներում. *-ան* (ակտիվ). *-bi* (ոչ-ակտիվ):

Շումիրերենում բացակայում է անդրադարձ դերանունների դասը. որը հատկանշական է մոմիմատիվ լեզուների համար, սակայն բացակայում է ակտիվ և էրգատիվ լեզուներում [Климов 1977, 112]: «Ինքը», «ինքն իրեն» իմաստով գործածվում էին *ni(te)*- «մարմին», երբեմն նաև *zi* «հոգի» գոյականները ստացական դերանվանական ածանցով. *ni-mu* «ինքս ինձ» *ni-zu* «ինքդ քեզ», *ni-te-ani* «ինքն իրեն (ակտիվ)», *ni-bi* «ինքն իրեն (ոչ-ակտիվ)», *ni-te-an-ene* «իրենք իրենց»:

Բայ

Բային հատուկ են դեմքի⁵, դասի, թվի, կերպի, եղանակի, կողմնորոշման⁶ քերականական կարգերը: Սի կողմ թողնելով վերջին երկուսը՝ կանգ կառնենք միայն այն կարգերի վրա, որոնք բնութագրական են կոնտենսիվ տիպաբանության տեսակետից:

Բայածնում իր արտահայտությունն է գտնում բայի բնույթը. անցողական բայի խոնարհումը տարբերվում է անանցողականից: Այս երևույթը հատկանշական է էրգատիվ տիպաբանության լեզուների համար [Климов 1973, 98]:

Կերպի կարգը՝ կատարյալ/անկատար հակադրությամբ ի հայտ է գալիս միայն անցողական բայի ոլորտում: Ինչպես ցույց է տվել հեղինակը շումիրերենում կերպային հակադրությունների վերլուծությանը [Խաչիկյան 2004], ինչպես նաև կերպի քերականական կարգի ծագմանը [Խաչիկյան 2006] մվիրված հոդվածներում, այդ կարգը ձևավորվում է ակտիվ տիպաբանությունից էրգատիվի վերափոխման արդյունքում:

Ուշագրավ է այն փաստը, որ կատարյալ խոնարհման սուբյեկտի դերում հանդես եկող դիմա-դասային մախածանցները (տե՛ս աղյուսակ. սյունակ 1) անկատար խոնարհման ձևերում կատարում են ուղիղ խնդրի դերը, իսկ կատարյալ խոնարհման օբյեկտային վերջածանցները՝ անկատար խոնարհման ենթակայի դերը (հմտ. օրինակներ 1ա-բ, 2ա-բ)⁷:

1ա. *imma-n-gi4-0* 'մա (-*n*) վերադարձրեց', G. Cyl.B XVIII 3

1բ. *nu-i-n-tuku(R)-u(<ə)* 'մա (-*ə*) չի/չպետք է (ոս-) վերցնի նրան (-*n*) [կնությանը]', CL XVII 49

2ա. *šu ba-ni-b-ti(R)-0* 'մա (-*b*) [թռչունը] այն (-0) այնտեղ (-*ni*) տարավ', DD 35

2բ. *mu-ni-b-nú(R)-ene* 'մրանք (-*ene*) այն (-*b-*) այնտեղ (-*ni-*) դրեցին', GLL 141

Քացի կերպային տարբերությունների արտահայտման քերականական այս եղանակից, զոյություն ունեին մաս գործողության կերպը (*Aktionsart*) արտահայտող այլ միջոցներ, որոնք հատկանշական են ակտիվ տիպաբանության լեզուների համար՝ ա՛րքային (տարարմատություն), բ/ բառակազմական (կրկնություն). (*dug*₄ : *e* «ասել, խոսել», *gen* : *du* «զմալ», *de*, : *tür* «տանել, բերել», *gar* : *gá-gá* «ղնել», *he* : *he-he* «խառնել», *si* : *si-si* «լցնել»):

Քայի սուբյեկտային և օբյեկտային ցուցիչների աղյուսակ

	1	2	3
	Ներգործական կատարյալ կերպի սուբյեկտ/ անկատար կերպի օբյեկտ	Ներգործական անկատար կերպի սուբյեկտ	Չեզոք սեռի սուբյեկտ/ ներգործական կատարյալ կերպի օբյեկտ
1 եզակի	-0*-R/ R-en**	R-en	R-en
2 եզակի	-e*-R/ R-en**	R-en	R-en
3 ակտիվ եզակի	-n-R	-R-e	-R-0
3 իմական. եզակի	-b-R	-	-R-0
1 հոգնակի	-0-R-enden*	-R-enden	-R-enden
2 հոգնակի	-e-R-enzen*	-R-enzen	-
3 ակտիվ հոգն.	-n-R-es*	-R-ene	-R-es
3 իմական. հոգն.	-b-R-0	-	

* Կատարյալ կերպի սուբյեկտային ցուցիչ:

**Անկատար կերպի օբյեկտային ցուցիչ:

Հատկանշական է անկատար և ամանցողական խոնարհման 1-ին և 2-րդ դեմքի ցուցիչների մույնությունը: Տարբերությունները ի հայտ են գալիս միայն 3-րդ դեմքում (տե՛ս աղյուսակ և օրինակներ 3ա-բ, 4ա-բ, 5ա-բ). Քանի որ, ինչպես մենք ցույց ենք տվել [Խաչիկյան 2004, 502], անկատար խոնարհման ցուցիչները ըստ էության ակտիվ սուբյեկտի ցուցիչներ են, իսկ ամանցողականինը՝ ոչ-ակտիվ, զարմանալի չէ, որ մնան տարբերություն չի արձանագրվում առաջին երկու դեմքերում. խոսողը և խոսակիցը ակտիվ/շնչավոր դասի ներկայացուցիչներ են:

3ա. *mu-dú (R)-en* 'ես (-*en*) կառուցում եմ', G. Cyl.A VIII 18

3բ. *i -gub(R)-en* 'ես (-*en*) կանգնած եմ', IE I v16

4ա. *mu-na-b-dah(R)-e* 'մա (-*e*) [խոսք] է ավելացնում', ELA 157

4բ. ի -gam-0 'մա (-0) խոնարհիվեց', LE 349

5ա. mu-ni-b-nš(R)-ene 'մրանք (-ene) այն (-b-) այնտեղ (-ni-) են դնում', GLL 141

5բ. mu-nš-re(R)-es 'մրանք (-es) մրա մոտ(-nš-) եկան', GA 2

Բայաձևում արտահայտված է մաս մախադասության ենթակայի կամ ուղիղ խնդրի, ինչպես մաս անուղղակի խնդրի դասը (-n-՝ ակտիվ, -b-՝ ոչ-ակտիվ), տե՛ս օրինակներ 6 և 2ա, 7 և 1բ, 8 և 5բ:

6.mma-n-gi-0 'մա (-n-) վերադարձրեց', G. Cyl.B XVIII 3

7.mu-n-ta-b- ed-(e)ne 'մրանք վերցնում են այն (-b) [հիվանդությունը] մրանից (-n-ta-)', LE 250:

8. i-b-si-gam-ed-es 'մրանք (-es) կխոնարհվեն դրա (-b-) առջև(-si-)', NE 35:

Եզրակացություն

Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ շումերերենը վաղ երգատիվ լեզու էր՝ ակտիվ տիպաբանության լեզուներին բնորոշ մի շարք ռեկիտային գծերով:

Այն գծերը, որոնք թույլ են տալիս առանց վարանելու որակել շումերերենը որպես երգատիվ լեզու, հետևյալն են.

ա/ մախադասության երգատիվ և աբսոլյուտիվ կառուցվածքի հետևողական հակադրությունը, անցողական բայերով կազմված մախադասությունները երգատիվ կառուցվածքի են, անկախ բայաձևից (անցողական բայի անկատար կերպը իր ձևով երգատիվ չէ, տե՛ս [Խաչիկյան 2004, 504]), անանցողական բայերով կամ անվանական ստորոգյալով կազմվածները՝ աբսոլյուտիվ;

բ/ երգատիվ և աբսոլյուտիվ հոլովների և խոնարհումների հակադրությունը ձևաբանական մակարդակում:

Վաղ երգատիվության նշաններից կարելի է հիշատակել երգատիվ և դիրեկտիվ հոլովների համատեղումը, կերպի քերականական կարգի սահմանափակ ոլորտը (այն չի տարածվում անանցողական բայերի վրա):

Ակտիվ տիպաբանության հետքեր են.

ա/ բառային մակարդակում՝ ակտիվ և ինակտիվ գոյականների հակադրությունը, ածական անվան որպես առանձին խոսքի մասի բացակայությունը, տարարմատ հիմքերի գործածությունը կերպային և թվային տարբերությունների արտացոլման համար;

բ/ ձևաբանական մակարդակում՝ լեզվի տարբեր համակարգերում (գոյականական, դերանվանական, բայական) ակտիվ և ոչ-ակտիվ դասերի հակադրության արտացոլումը, անձնական դերանունների համակարգում երգատիվ և աբսոլյուտիվ հոլովի հակադրության բացակայությունը, անցողական բայի անկատար կերպի և անանցողական բայի խոնարհումների համարյա լիակատար համընկնումը⁹:

MARGARIT KHACHIKYAN
THE TYPOLOGICAL CHARACTERISTICS OF THE SUMERIAN
LANGUAGE

The author, examining the features of the Sumerian language relevant from the viewpoint of the contentive typology, comes to the conclusion that it is an early ergative language with some important residual features of the active typology.

The features that allow us to qualify Sumerian as a language of the ergative typology are:

- The opposition of the ergative and absolutive sentence constructions on the syntactical level: the sentences with transitive verbs are ergative, irrespective of the verbal morphology (the transitive imperfective forms are not ergative, yet they appear in sentences of ergative construction), those with intransitive verbs or nominal predicates are absolutive;
- The opposition of the ergative case, that of the subject of the transitive verb, to the absolutive one, denoting the subject of the intransitive and the object of the transitive verb, as well as the opposition of the transitive and intransitive conjugations on the morphological level.

Among the features peculiar to languages of early ergativity the absence of a separate ergative case (its function is performed by the directive case), as well as the underdevelopment of the category of aspect (it is confined to the sphere of the transitive verb) are to be mentioned.

The relics of the active typology in Sumerian are:

- The breakdown of the nominal vocabulary into active (animate) and inactive (inanimate) classes, the absence of the class of adjectives and the use of suppletive verbal stems for expressing Aktionsart and number distinctions - on the lexical level;
- The reflection of the opposition of the active and inactive classes in the nominal, pronominal and verbal systems, the absence of the opposition of the ergative and nominative cases in the system of the personal pronouns, the almost complete coincidence of the imperfective transitive and the intransitive conjugations of the verb (the sameness of the 1st and 2nd persons in both conjugations, as well as the differences revealed in the 3rd person are easily explained within the frames of the active typology: the forms of the first two persons coincide, as both the speaker and the addressee can only belong to the active class, whereas the 3rd person subject marks of the imperfective and intransitive conjugations originate from active and inactive class marks respectively).

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խեն ազենտիվ բայերը իմաստով շատ մոտ են անցողականներին, իսկ ֆակտիտիվ բայերը՝ անանցողականներին, այդ խմբերը չեն մույնանում. ֆակտիտիվ բայերի խումբը իր ընդգրկումով անցողական բայերի խմբից ավելի մեղ է, քանի որ չի ներառում այն անցողական բայերը, որոնք մակերեսորեն են ներգործում առարկաների վրա, ինչպես, օրինակ, «համբուրել», «գորել», «շոյել» բայերը. որոնք պատկանում են ֆակտիտիվ բայերի խմբին, ի տարբերություն «ուտել», «սպանել», «ջարդել» ազենտիվ բայերից, որոնք, ներգործելով առարկայի վրա, առաջ են բերում վերջինիս փոփոխությունը: Այնու-

- հանդերձ ստորև հարմարության նպատակով կօգտագործենք անցողական/անանցողական եզրերը: [prorocipy, 95])
2. Էրգատիվ հոլովում հաճախ համատեղվում են ենթակայի և անուղղակի խնդրի դերերը, իմմ, էրգատիվ տկալաբանության մյուս հիմնական հոլովը՝ արսոյոտիտիվը, որը նույնպես հանդես է գալիս երկու գործառնությամբ՝ անանցողական քայի սուբյեկտի և ուղիղ խնդրի: Ակտիվ: ինակտիվ հակադրությունը, սակայն, չի արտահայտվում գոյականի կրկնության կազմվող հոգնակիի ձևերում. հոգնակիի կազմության այդ եղանակը կիրառվում է և՛ ակտիվ, և՛ ինակտիվ գոյականների հետ:
 4. Առեղծված է մնում այն վիաստը, որ ակտիվ/շնչավոր դասի դերանունը պարունակում է ոչ-ակտիվ դասի -b-, իսկ ոչ-ակտիվ/անշունչ դերանունը՝ ակտիվ դասի -n- ցուցիչը:
 5. Բայանմունքն արտահայտություն է գտնում ինչպես ենթակայի, այնպես էլ ուղիղ և անուղղակի խնդրի դերը:
 6. Կողմնորոշման կարգը արտահայտում է գործողության ուղղվածությունը խոսողի տեսանկյունից, ա տարրը պարունակող նախածանցները (տս-, imta-, imti-) ենթադրաբար արտահայտում են գործողության ուղղությունը դեպի խոսողը, b տարրը (ba-, bi-)՝ խոսողից դուրս:
 7. Այս փաստի քաջատրությունը տե՛ս [Խաչիկյան 2004, 503-504]:
 8. Այս հակադրությունը առանձին վերցված կարող է դիտվել որպես նոմինատիվ տիպից բնորոշ գիծ, քանի որ նոմինատիվ տիպի լեզուներում ենթակայի հոլովը մեկն է՝ ուղղականը, սակայն լեզվի ամբողջական համակարգում դիտարկվելիս այս երևույթը ներկայանում է մեզ որպես ակտիվ տիպաբանության հատկանիշ, ի տարբերություն էրգատիվի:
 9. Այս փաստը, ինչպես և անձնական դերանունների համակարգում էրգատիվ հոլովի քացակայությունը, կարող է ընկալվել և ընկալվել է (տե՛ս [Michalowski 1980]) որպես նոմինատիվ լեզուներին հատուկ երեվույթ (վերջիններին հատուկ չէ անցողական խոնարհման հակադրությունը անանցողականին): Սակայն, ինչպես հեղինակին հաջողվել է ցույց տալ [Խաչիկյան 2004], անկատար և անանցողական խոնարհումների նույնությունը առաջին երկու դեմքերում, ինչպես և 3 դեմքում ի հայտ եկող տարբերությունները (տե՛ս աղյուսակ) հեշտությամբ քաջատրվում են ակտիվ տիպաբանության չբանականներում. առաջին երկու դեմքերը համընկնում են. քանի որ խոսողն ու խոսակիցը կարող են միայն ակտիվ դասին պատկանել, մինչդեռ 3 դեմքի տարբերությունները գալիս են ակտիվ: ոչ-ակտիվ հակադրությունից (անանցողական խոնարհումը ծագում է վիճակի քայի խոնարհումից և, հետևաբար, սուբյեկտի ցուցիչը սկզբնապես ոչ-ակտիվ դասին էր պատկանում, ի տարբերություն անկատար խոնարհման ցուցիչը, որը ծագումով ակտիվ է:

Օգտագործված գրականություն

Խաչիկյան Մ.

2004 -Կերպի քերականական կարգը շումերերենում.- ՄՄԱԵԺ, XXIII, եր., էջ 497-506:

2006 - Կերպի/ծամանակի ձևավորումը շումերերենում, էլամերենում.

խոնարհում և ուրարտերենում. ՄՄԱԵԺ, XXV, եր., էջ 273-283:

Клянов Г. А.

1973 - *Очерк общей теории эргативности*, М.

1977 - *Типология языков активного строя*, М.

1983 - *Принципы контентивной типологии*, М.

Michalowski P.

1980 - Sumerian as an Ergative Language I, *Journal of Cuneiform Studies* 32/2, pp. 86-103.

Հապավումներ

- ՄԱՍԵԺ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ
- CL F. Steel, The Code of Lipit-Ishtar. *American Journal of Archaeology* 3, 1948, 425-450.
- DD B. Alster, Dumuzi's Dream. Aspects of Oral Poetry in a Sumerian Myth. Copenhagen, 1972 (*Mesopotamia*, vol. 1).
- ELA S. Cohen, Enmerkar and the Lord of Aratta, 1973 (Dissertation Philadelphia)
- G.Cyl.A,B A. Falkenstein, W. von Soden, Sumerische und akkadische Hymnen und Gebete, Zürich-Stuttgart, 1953.
- GA S.N. Kramer, Gilgames and Agga, *American Journal of Archaeology* 53, 1949, 1-29.
- GLL S. N. Kramer, the Land of the Living. *Journal of Cuneiform Studies* 1, 1947, 3-46.
- IE G. Farber-Flügge, Der Mythos §Inanna und Enki" unter besonderer Berücksichtigung der Liste der m e, Romc, 1973 (*Studo Pohl* 10).
- LE K. Wilcke, Das Lugalbandacpos, Wiesbaden. 1969.
- NE A. W. Sjöberg. Nungal in the Ekur, *Archiv für Orientforschung* 24, 1973, 19-46.